

### 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

#### 3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, փողի բազան 2002թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 71841 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն նվազել է 8528 մլն. դրամով կամ 10.6 %-ով:

Ըստ նախնական տվյալների 2002թ. հունվարի 31-ի դրությամբ փողի զանգվածը կազմել է 162960<sup>1</sup> մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել՝ 9258 մլն. դրամով կամ 5.4%-ով:

2001թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ զուտ արտաքին ակտիվներն աճել են 13088 մլն. դրամով և կազմել փողի զանգվածի 55.0%-ը (89584 մլն. դրամ), իսկ զուտ ներքին ակտիվները նվազել՝ 22346 մլն. դրամով և կազմել փողի զանգվածի 45.0%-ը (73376 մլն. դրամ):

#### Փողի զանգվածի կազմը և կառուցվածքն ըստ ակտիվային բաղադրատարրերի

	<i>ամսվա վերջի դրությամբ</i>			
	2001թ. դեկտեմբեր		2002թ. հունվար	
	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ
Զուտ արտաքին ակտիվներ, ընդամենը	76496	44.4	89584	55.0
Զուտ ներքին ակտիվներ, ընդամենը	95722	55.6	73376	45.0
<i>այդ թվում՝</i>				
Կառավարություն	8372	4.9	-2701	-1.7
Հանրապետական կառավարություն	8466	4.9	-2582	-1.6
Սոցապ հիմնադրամ	-36	0.0	-8	0.0
Տեղական կառավարման մարմիններ	-58	0.0	-111	-0.1
Տնտեսություն	102669	59.6	83303	51.1
Կազմակերպություններ	62804	36.5	57761	35.4
Տնտեսության այլ ճյուղեր	39865	23.1	25542	15.7
Զուտ այլ ակտիվներ	-15319	-8.9	-7226	-4.4

#### Փողի զանգվածի կազմը և կառուցվածքն ըստ պասիվային բաղադրատարրերի

	<i>ամսվա վերջի դրությամբ</i>			
	2001թ. դեկտեմբեր		2002թ. հունվար	
	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ
<b>Փողի զանգված, ընդամենը</b>	172218	100	162960	100
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	103.0	x	94.6	x
<i>այդ թվում՝</i>				
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	65027	37.7	55831	34.2
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	110.0	x	85.9	x
Ցպահանջ ավանդներ	13581	7.9	13485	8.3
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	96.6	x	99.3	x
Ժամկետային, խնայողական ավանդներ	6674	3.9	7812	4.8
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	97.8	x	117.1	x
Արտարժույթով ավանդներ	86936	50.5	85832	52.7
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	99.6	x	98.7	x
<b>Դրամական բազմարկիչ</b>	2.2	x	2.21	x


2002թ. հունվարի 31-ի դրությամբ փողի զանգվածում ՀՀ ազգային արժույթին բաժին ընկնող մասը կազմել է 77128 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով ավանդների մասը՝ 85832 մլն. դրամ: Ընդ որում,

<sup>1</sup> Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:

արտարժույթով ավանդները 2001թ. դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել են 1104 մլն. դրամով կամ 1.3%-ով և կազմել են փողի զանգվածի 52.7%-ը (2001թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել են 2.2 տոկոսային կետով):

**Փողի զանգվածի տարրերի դինամիկան 2002թ. հունվարին**

մլն. դրամ



**Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները**

	2001թ. դեկտեմբեր	2002թ. հունվար
Առևտրային բանկերի գործառնությունների տոկոսադրույքները		
վարկեր <sup>1</sup>	27.36	26.55
ավանդներ <sup>1</sup>	13.52	12.01
ՀՀ կենտրոնական բանկի ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	14.0

<sup>1</sup> Հաշվարկված է 15 օրից մինչև մեկ տարի ժամկետով միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրաված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):